



«Շուկայագիտություն (մարքեթինգ)» առկա և հեռակա բակալավրիատի կրթական ծրագիր

Մասնագիտության նկարագիրը

«Շուկայագիտություն» բակալավրիատի կրթական ծրագրի նպատակն է համապատասխան գիտելիքներով, կարողություններով և հմտություններով օժտված բարձր որակավորմամբ մասնագետներ պատրաստել, որոնք կարող են շուկայագետի, շուկայի հետազոտության, վերլուծաբանի, գովազդի, ապրանքների, ապրանքային մակնիշների և շուկայի զարգացման վաճառքների, հիմնական հաճախորդների հետ աշխատանքների կամ, հասարակության հետ կապերի մասնագետի պաշտոններ զբաղեցնել արտադրական ձեռնարկություններում, առևտրի և ծառայությունների ոլորտի ընկերություններում: Ծրագիրը միջգիտակարգային է և ներառում է՝ կառավարման, բիզնեսի ռազմավարական զարգացման, վարքաբանության, դիզայնի և էսթետիկայի, սոցիոլոգիայի, մշակութաբանության, տնտեսագիտության, տնտեսական գործունեության վերլուծության, ֆինանսական և կառավարչական վերահսկողության, տնտեսական հետազոտությունների, վիճակագրության, մաթեմատիկայի, տնտեսական կանխատեսումների իրականացման, տնտեսական իրավունքի և այլ ոլորտներ:

Աշխատանքի հնարավորությունները

«Շուկայագիտություն (մարքեթինգ)» կրթական ծրագրի շրջանավարտներին հնարավորություն է ընձեռվում աշխատելու հետևյալ բնագավառներում.

- գործարարություն և կառավարում,
- խորհրդատվություն արտադրության, ծառայությունների ֆինանսաբանկային ոլորտներում և պետական հատվածում,
- հետազոտություններ, զարգացում և խորհրդատվություն
- միջազգային գործարարություն (ներմուծում և արտահանում):

«Շուկայագիտություն (մարքեթինգ)» կրթական ծրագրի շրջանավարտները կարող են զբաղեցնել շուկայագետի, գովազդի, հասարակության հետ կապերի, իրացման խթանման եղանակների մշակման, ապրանքագետի, ապրանքների և ապրանքային մակնիշների զարգացման, շուկայի ուսումնասիրության և վերլուծության, տնտեսական գործունեության արդյունավետության գնահատման վաճառքի, շուկայի զարգացման, հիմնական հաճախորդների հետ աշխատանքների մասնագետի

պաշտոններ՝ արտադրական ձեռնարկություններում, առևտրի և ծառայությունների ոլորտի ընկերություններում, կապի, հեռահաղորդակցությունների և էլեկտրոնային գործարարության ոլորտի ընկերություններում, հետազոտական և խորհրդատվական ընկերություններում, առևտրային բանկերում, մարքեթինգային հետազոտությունների և ձեռնարկատիրության աջակցման կամ գործարարության զարգացման բնագավառում գործող ՀԿ-ներում, միջազգային կազմակերպություններում: